«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
22, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
Հեռ. +374 (60) 888 888
Էլ. Փոստ՝ info@arpinet.am
Վեբ կայք՝ www.arpinet.am

«ARPINET» LLC
22/2 Baghramyan St., 1108 Ejmiatsin, Armavir region, Republic of Armenia (RA)
Tel: +374 (60) 888 888
E-mail: info@arpinet.am
Web: www.arpinet.am

ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 00008/25/04/2025

Ք. Էջմիածին «25» ապրիլ 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ (ՀՎՀՀ՝ 04447253, Հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր, ք"Արմավիր, փողոց Աբովյան, շենք 71, Բանկ՝ Ֆինանսների նախարարություն, հ/հ՝ 900331131053) ի դեմս գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի, այսուհետ՝ «Պատվիրատու» մի կողմից, և «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 04719683, հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, Բաղրամյան 22/2, Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ, հ/հ՝ 2050622092881001, ՀՎՀՀ՝ 04719683) ի դեմս՝ տնօրեն Կարեն Մուրադյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կապալառու», մյուս կողմից (այսուհետ՝ առանձին հիշատակման համար Կողմ, միասին հիշատակման համար՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող և կողմերի միջև 25.04.2025թ. հաստատված նախահաշվարկ 41-ում նկարագրված աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Կապալառուն Աշխատանքը կատարում է սեփական միջոցների հաշվին:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետն է 25.04.2025թ. մինչև 25.05.2025թ. Կապալառուն իրավունք ունի աշխատանքն ավարտել ժամկետից շուտ:

1.4. Աշխատանքը համարվում է կատարված՝ Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կատարած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա՝ ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

2.1.3. եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու՝ ողջամիտ ժամկետ նշանակել Կապալառուի թույլ տված թերությունները վերացնելու համար և, եթե այդ ժամկետում Կապալառուն չի վերացնում թերությունները, հրաժարվել կապալի պայմանագրից և Կապալառուի հաշվին թերությունների վերացումը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները.

2.1.4. մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները.

2.1.5. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են կատարված աշխատանքները հանձնելու պահից 10 օրացույցային օրվա ընթացքում.

2.1.6. առանց կատարված աշխատանքը վարձատրելու, ինչպես նաև վնասները հատուցելու պահանջել լուծարելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները, որոնք մանրամասն նկարագրված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող նախահաշվարկ 41-ում:

2.1.7. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ 10 օրացույցային օրվա ընթացքում, իր ընտրությամբ, Կապալառուից պահանջել՝ ա) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները. բ) համաչափորեն նվազեցնելու աշխատանքի համար սահմանված գինը. գ) հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը.

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. չխոչնդոտել աշխատանքների կատարմանը և սույն պայմնագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով աջակցել Կապալառուին՝ աշխատանքները կատարելիս.

2.2.2. 1.1. կետում նշված աշխատանքի կատարման համար մինչև նախահաշվարկի հաստատումը Կապալառուին տրամադրել անհրաժեշտ նախագծային և նախահաշվարկային փաստաթղթեր:

2.2.3. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից՝ աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

2.2.4. Կապալառուի կողմից աշխատանքների ավարտի մասին ծանուցվելու դեպքում ընդունել կատարված աշխատանքները, իսկ կատարված աշխատանքի արդյունքն ընդունելու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խուսափելու դեպքում, ծանուցվելուց 20 օր անց աշխատանքը կհամարվի պատշաճ ձևով կատարված, ուստի Պատվիրատուն պարտավորվում է վճարել կատարված աշխատանքի համար, սույն պայմանագով սահմանված կարգով և ժամկետներում:

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Պատվիրատուից ընդունել կատարած աշխատանքները և վճարել դրանց դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

2.4. Կապալառուն պարտավոր է՝

2.4.1. մինչև սույն պայմանագիրը կնքելը՝ պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա տեսակների և առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ.

2.4.2. Աշխատանքը կատարել պատշաճ որակով.

2.4.3. Աշխատանքի արդյունքը հանձնել Պատվիրատուին.

2.4.4. Աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ

օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին.

2.4.5. Պատվիրատուի պահանջով 20 (քսան) օրվա ընթացքում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները, եթե Կապալառուն Աշխատանքի կատարման ընթացքում պայմանագրի պայմաններից թույլ է տվել շեղումներ, որոնք վատթարացրել են Աշխատանքի որակը.

2.4.6. Աշխատանքը կատարել անձամբ:

3. Աշխատանքի գինը և վարձատրությունը

3.1. Աշխատանքի գինը որոշվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազնող, կողմերի կողմից հաստատված նախահաշիվ 41-ով:

3.2. Աշխատանքի նախահշիվը վերջնական չէ և վերջնահաշվարկի ժամանակ հնարավոր է արժեքների, օգտագործվող նյութերի, սարքավորումների և ցանցի կառուցման համար անհրաժեշտ այլ իրերի քանակի և արժեքների փոփոխություն, կախված կատարվող աշխատանքների առանձնահատկություններից և/կամ Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջների (փոփոխություններ, ավելացումներ, նվազեցումներ):

3.3. Եթե Կապալառուի փաստացի ծախսերը պակաս են այն գումարից, որը հաշվի է առնվել աշխատանքի գինը որոշելիս, Կապալառուն պահպանում է նախկին պայմաններով նախատեսված վարձատրություն ստանալու իրավունքը, եթե Պատվիրատուն չի ապացուցում, որ Կապալառուի կատարած խնայողությունն ազդել է աշխատանքի որակի վրա:

3.4. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող վերջնահաշվարկ 41-ով սահմանված գինը՝ որն իր մեջ ներառում է նախավճարը, Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքներն ընդունելուց հետո, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, 15 օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքի կատարման ժամկետների խախտման դեպքում Կապալառուն Պատվիրատուին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գումարի 0,01 (զրո ամբողջ զրո մեկ) տոկոսի չափով:

4.2. սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը սույն պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Պատվիրատուն Կապալառուին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գումարի 0,01 (զրո ամբողջ զրո մեկ)տոկոսի չափով:

4.3. տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանտվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտա- ռարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով կարող է նշանակվել փորձաքննություն, որի ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելուց հետո և գործում է մինչև կատարված աշխատանքի համար Պատվիրատուի կողմից Կապալառուին ենթակա գումարի վճարման օրը:

8. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
Հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր, ք.Արմավիր,
Աբովյան, շենք 71
ՀՎՀՀ՝ 04447253
Բանկ՝ Ֆինանսների նախարարություն
հ/հ՝ 900331131053
Հեռ.՝ +374 93 183110
e-mail: a.hakobyan77@mail.ru
Գլխավոր քարտուղար՝
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
_____
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ (060) 888-888,
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
ՀՎՀՀ՝ 04719683
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ,
հ/հ՝ 2050622092881001
e-mail: info@arpinet.am,
Տնօրեն՝ Կ.ՄԻՐԱԴՅԱՆ
_____
(ստորագրություն) Կ.Տ.

ԹԻՎ 41 ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿ

N	Անվանում	Հատ մետր	Արժեք	Ընդամենը	Նկարագրություն
1	D-Link 3200-18 switch	3	45000	135000	Յուրաքանչյուրից 18 կետ վերցնելու հնարավորությամբ խելացի Switch
2	MiKrotik RB750GR3 Board	1	59000	59000	Հեռախոսների ապարատները կարգավորող սարքավորում
3	Մալուխ UTP	800	250	200000	Հեռախոսների ներքին ցանցի համար օգտագործվող մալուխ
4	Աշխատանք	34	8000	272000	Կատարված աշխատանքների համար
5	Կարգավորում	31	4000	124000	Կարգավորումների և կարգաբերումների համար վճարվելիք գումար
Ընդամենը 790000					

Աշխատանքի նախահաշիվը վերջնական չէ և վերջնահաշվարկի ժամանակ հնարավոր է արժեքների, օգտագործվող նյութերի, սարքավորումների և ցանցի կառուցման համար անհրաժեշտ այլ իրերի քանակի և արժեքների փոփոխություն, կախված կատարվող աշխատանքների առանձնահատկություններից և/կամ Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջների (փոփոխություններ, ավելացումներ, նվազեցումներ):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
Հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր, ք.Արմավիր,
Աբովյան, շենք 71
ՀՎՀՀ՝ 04447253
Բանկ՝ Ֆինանսների նախարարություն
h/h՝ 900331131053
Հեռ.՝ +374 93 183110
e-mail: a.hakobyan77@mail.ru
Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ (060) 888-888,
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք.
Էջմիածին, Բաղրամյան 22/2
ՀՎՀՀ՝ 04719683
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ,
h/h՝ 2050622092881001
e-mail: info@arpinet.am,
Տնօրեն՝ Կարեն Մուրադյան

(ստորագրություն) Կ.Տ.